ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 30 սեպտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը
Նախագահությամբ՝ Կ.Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Զ.Ղուկասյանի և Կ.Բալայանի

Քննության առնելով Հայկ Միքայելյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղաքացի Հայկ Միքայելյանը և Սամվել Միքայելյանը դիմել են ՀՀ Սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգ 231-րդ և 233-րդ (1-ին մասի 3-6 կետերը, 2 մասը, 4-րդ մասը) հոդվածների սահմանադրականությունը:

Դիմումում բարձրացված հարցը, բացառությամբ 231-րդ հոդվածի 2-րդ մասի, 233-րդ հոդվածի 1-ին մասի 3-5 կետերի և 2-րդ մասի, քննության է առնվել ՀՀ սահմանադրական դատարանում եւ ստացել իր լուծումը համապատասխանաբար՝ ՍԴՈ-690 և ՍԴՈ-754 որոշումներով: Նկատի ունենալով այդ հանգամանքը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի պահանջը, Սահմանադարական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

1.Քաղաքացիներ Հայկ Միքայելյանի և Սամվել Միքայելյանի դիմումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդված 1-ին մասի, 3-րդ մասի, 233-րդ հոդվածի 1-ին մասի 6 կետի և 4-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելու մասին, մերժել,

2. Քաղաքացիներ Հայկ Միքայելյանի և Սամվել Միքայելյանի դիմումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի, 233-րդ հոդվածի 1-ին մասի 3-5 կետերի և 2-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային ժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՔԱՐՏՈՒՂԵՐՈՒԹՅՈՒՆ